Հաստատում եմ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտոր Ե. Սերոբյան

«__04__» Հունվար 2024թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Էլոյան Նարեկ Արայիկի ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Տուրիստական պատրաստության մեթոդական առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Դպրոցականների շարժողական ակտիվության ապահովումը օրգանիզմի զարգացման, ֆունկցիոնալ հնարավորությունների բարելավման և հարմարվողականության բարձրացման կարևորագույն պայման է: Պետք է փաստել, որ ֆիզիկական կուլտուրայի դասերն իր ողջ կազմակերպչական և դիդակտիկ առանձնահատկություններով չեն կարող ապահովել սովորողների ֆունկցիոնալ բարձր վիճակը, անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածության մակարդակը: Այդ իսկ պատճառով դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացի կատարելագործման նոր ուղիների որոնումը համարվում է արդիական և հրատապ լուծում է պահանջում:

Հեղինակն այդ հիմնախնդրի լուծումը տեսնում է՝ տուրիստական պատրաստությունը ներդնելով դպրոցականների կրթական համակարգ: Բազմաթիվ աշխատանքներում ընդգծվում է տուրիզմի բազմակողմանի ներգործությունը դպրոցականների վրա, որը պայմանավորված է առողջարարական, կրթական, դաստիարակչական և կիրառական նշանակությամբ:

Ն.Ա. Էլոյանը, ուսումնասիրելով և վերլուծելով ծրագրանորմատիվային փաստաթղթերի բովանդակությունը, արձանագրել է, որ տուրիստական պատրաստությունը հանդիսանում է ֆիզիկական դաստիարակության համակարգի կարևոր բաղադրիչ:

Գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը թույլ տվեց հայցորդին եզրակացնելու, որ տուրիստական պատրաստությունը ընդգրկված է մի շարք երկրների

դպրոցական կրթական համակարգերում և առանձնացվում է բովանդակության, մեթոդների և կազմակերպման ձևերի բազմազանությամբ՝ արտացոլելով ուսումնական, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների միասնությունը:

ՀՀ-ում տուրիստական պատրաստությունը ընդգրկված է ավագ դպրոցի ֆիզիկական դաստիարակության ծրագրում: Սակայն դիտարկումները ցույց են տալիս, որ գործնականում այն լիովին չի իրականացվում, ակնհայտ են նյութատեխնիկական, կազմակերպչական բազում պատճառներ:

Դրա հետ մեկտեղ պետք է փաստել, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշչում և ծրագրում բաց է մնացել միջին դպրոցը, այնինչ հենց այդ տարիքում տուրիստական պատրաստությունը կարող է էական դեր ունենալ անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար:

Վերոնշյալը պայմանավորում է թեմայի արդիականությունը, դրա գիտական, տեսական, գործնական նշանակությունը:

Հայցորդը նպատակ է դրել՝ մշակելու հանրակրթական դպրոցի 7-9-րդ դասարանների տուրիստական պատրաստության բովանդակությունը և դասավանդման մեթոդիկան:

Ներածությունում հեղինակը ներկայացրել է աշխատանքի նպատակը, խնդիրները, օգտագործված մեթոդները, ինչպես նաև ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում հայցորդը նկարագրում է գիտամեթոդական գրականության այն շրջանակը, որը թույլ է տվել պարզաբանելու հիմնախնդրի ուսումնասիրության աստիճանը, հստակեցնելու աշխատանքի նպատակը, օբյեկտը, ուրվագծելու հետազոտության հիմնական ուղղությունները:

Հեղինակը ներկայացնում է տուրիզմի սոցիալ-մանկավարժական նշանակությունը, դրա բազմակողմանի ներգործությունը դպրոցականների վրա, միջառարկայական բազմազան կապերը դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների հետ:

Գնահատելի է Ն.Էլոյանի կողմից կատարված ծրագրանորմատիվային փաստաթղթերի բովանդակության ուսումնասիրությունը և վերլուծությունը, ինչը թույլ է տվել հեղինակին ներկայացնելու տուրիստական պատրաստությունը՝ որպես ֆիզիկական դաստիարակության համակարգի կարևոր բաղադրիչ:

Հարկ ենք համարում նշել, որ հայցորդի կողմից ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ գիտամեթոդական գրականության վերլուծությունը նրան հնարավորություն է ընձեռել հիմնավորելու հանրակրթական դպրոցում տուրիստական պատրաստության կարևորությունը և իրականացման անհրաժեշտությունը:

Աշխատանքի երկրորդ գլխում հեղինակը ներկայացրել է հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության ընթացքում ատենախոսի կողմից կիրառվել են բազմազան մեթոդներ, որոնք ապահովել են փաստացի տվյալների ձեռքբերում՝ բավարարելով հուսալիության ու օբյեկտիվության պահանջները:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված են դպրոցականների և ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումների, 7-9-րդ դասարանների աշակերտների ֆունկցիոնալ վիճակի և ֆիզիկական պատրաստվածության մակարդակի թեստավորման արդյունքները: Հարցումները բացահայտել են, որ ուսուցիչների 95.1%-ը հնարավոր է համարում դպրոցում տուրիստական պատրաստության կազմակերպումը:

Նախնական հետազոտությունները Ն.Ա. Էլոյանին թույլ տվեցին ի հայտ բերելու Երևան քաղաքի և Արագածոտնի մարզի դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության և ֆունկցիոնալ վիճակի մակարդակը:

Ատենախոսության չորրորդ գլխում ներկայացված են մանկավարժական գիտափորձի արդյունքները:

Ատենախոսը, մանկավարժական գիտափորձի պլանավորման ընթացքում հիմք է ընդունել համալիր մոտեցման սկզբունքը՝ համակցելով ֆիզիկական դաստիարակության դասային և ոչ դասային ձևերը: Հայցորդը կազմակերպել է տուրիստական պատրաստությունը ֆիզիկական կուլտուրայի դասերի ընթացքում ընտրովի նյութի ժամերի շրջանակում և արտադասարանական պարապմունքների ձևով: Առանձնակի հարկավոր է նշել հեղինակի կողմից 7-9-րդ դասարանների սովորողների համար տուրիստական պատրաստության բովանդակության մշակումը՝ պահպանելով մատչելիության և հաջորդականության սկզբունքները: Հատուկ պետք է ընդգծել եռամյա գիտափորձի անցկացումը, որը ապահովել է հետազոտության տրամաբանությունը: Ն.Էլոյանի կողմից մշակված տուրիստական պատրաստության մեթոդիկան փորձարկվել է Երևան քաղաքի և Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների պայմաններում, ինչը հնարավորություն տվեց ներկայացնելու դրա կազմակերպման առանձնահատկությունները բնակավայրի տեղանքի հաշվառմամբ:

Ամփոփելով գիտափորձի արդյունքները՝ կարելի է փաստել, որ Ն.Ա. Էլոյանի կողմից մշակված տուրիստական պատրաստության բովանդակությունը և անցկացման մեթոդիկան նպաստել է դպրոցականների ֆունկցիոնալ վիճակի բարելավմանը, ֆիզիկական պատրաստության մակարդակի բարձրացմանը, գիտելիքների տիրապետմանը, կիրառական անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Դրական գնահատելով կատարված հետազոտությունը և կարևորելով ստացված արդյունքների գործնական նշանակությունը՝ հարկ ենք համարում նշել որոշ դիտողություններ.

1. Հեղինակը, կազմակերպելով դպրոցականների հարցումը Երևան քաղաքում և մարզերում, աշխատանքում ներկայացրել է ամփոփ ձևով: Ցանկալի կլիներ, որ հարցման արդյունքները վերլուծվեին առանձին, ինչպես սեռատարիքային առանձնահատկությունների, այնպես էլ բնակավայրի հաշվառմամբ:

2. Հայցորդը առաջին գլխում ընդլայնված կերպով ներկայացնում է տուրիզմը՝ որպես այն եզակի միջոցներից մեկը, որը ապահովում է միջառարկայական բազմազան կապերը դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների համեմատությամբ: Սակայն գիտափորձը նկարագրելիս այդ հարցերը սեղմ են ներկայացված:
3. Հեղինակը նշում է, որ գիտափորձի անցկացման ընթացքում համաճարակի պատճառով ժամանակավորապես դադարեցվել են դասերը և արտադասարանական պարապմունքները: Դպրոցականները ստացել են ինքնուրույն առաջադրանքներ: Ցանկալի կլիներ, որ աշխատանքում մանրամասն ներկայացվեր դրանց բովանդակությունը:
4. Ցանկալի կլիներ, որ հեղինակն իր հետազոտության հիման վրա պատրաստեր մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար:
5. Տեքստում առկա են որոշ վրիպումներ, որոնք կրում են տեխնիկական բնույթ (էջ 38,65,66,76):

Սակայն վերոնշյալ դիտողությունները չեն ստվերում կատարված հետազոտության գիտական արժեքը, գործնական նշանակությունը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և նրա մեջ լիովին արտացոլված է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հեղինակն իր հետազոտության արդյունքները ներկայացրել է միջազգային գիտաժողովներում, ամսագրերում ու գիտական ժողովածուներում:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նարեկ Արայիկի Էլոյանի «Տուրիստական պատրաստության մեթոդական առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում» թեմայով թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի տեսական և կիրառական կարևոր նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02

«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտական թվանիշին , իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ՇՊՀ-ի Սպորտի և արվեստի, Մանկավարժության ամբիոնների համատեղ նիստում (արձանագրություն թիվ 8), որին մասնակցել են՝ մ.գ.դ Ա.Մկոյանը, Ռ.Մարդոյանը, Ս.Սողոյանը,

Ա.Կիրակոսյանը, պրոֆեսորներ՝ Բ.Սերոբյանը, Ա.Մաթևոսյանը, Վ.Խաչատրյանը, բ.գ.թ դոցենտ Օֆ.Հովհաննիսյանը, մ.գ.թ. դոցենտ Գ.Աղանյանը, Մ.Կարապետյանը, Լ.Միքայելյանը, մ.գ.թ. Գ.Բարսեղյանը, Ա.Սիմոնյանը:

Հասարակական գիտությունների ֆակուլտետի
դեկանի Ժ/Պ Օֆ.Հովհաննիսյան

Սպորտի և արվեստի ամբիոնի
վարիչի Ժ/Պ Գ.Վ.Աղանյան

Հաստատում եմ՝
ստորագրությունները
«Շիրակի պետական համալսարան» հիմնադրամի գիտական քարտուղար՝
կ.գ.թ., դոցենտ Կ.Պետրոսյան